Այսօր տեղի է ունեցել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի հերթական նիստը, որը վարել է հանձնաժողովի նախագահ Սիմոն Տեր-Սիմոնյանը:

Հանձնաժողովը քննարկել է 9 բարեգործական ծրագիր: Մասնավորապես, քննարկվել և հաստատվել են՝

«Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Հադրութի շրջանի Ուխտաձոր գյուղի ջրամատակարարման համակարգի վերակառուցում», «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Շուշի քաղաքի Եզնիկ Մոզյանի անվան արհեստագործական արական դպրոցի կառուցման նախագծման փորձաքննություն», «Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի համայնքների ուսումնական, մշակութային կառույցների և ջրամատակարարման համակարգերի տեխնիկական վիճակի ուսումնասիրություն ու հետազոտություն», «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք գյուղի նոր միջնակարգ դպրոցի սպորտային դահլիճի և հանդիսությունների սրահի կառուցում» ծրագրերը.

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից իրականացվող «Հառիճավանքի վերակառուցման 2-րդ փուլի շինարարական աշխատանքներ» ծրագիրը.

«Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Շինարարական նյութերի մատակարարում Լոռու մարզի Արևաձագ և Քարինջ համայնքներին» ծրագիրը.

ԱՄՆ-ի միացյալ հայկական հիմնադրամի կողմից իրականացվող «Մարդասիրական օգնություն Հայաստանին» ծրագիրը.

Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության, Կովկասի բնության հիմնադրամի և «Դիլիջան» Ազգային պարկ» ՊՈԱԿ-ի միջև 04.03.2011 թվականին կնքված դրամաշնորհի պայմանագրի շրջանակներում ֆինանսավորվող» ծրագիրը.

«Կամրջակ» սոցիալ-բարեգործական հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության «Երևանի լսողության խանգարումներ ունեցող երեխաների հատուկ կրթահամալիր» ՊՈԱԿ-ի ուսումնական շենքի ջեռուցում» ծրագիրը.

Նիստում քննարկվել և հաստատվել են նաև նախկինում հաստատված ծրագրերի շրջանակներում իրականացվող հարակից գործարքներ և տարբեր կազմակերպությունների հասցեներով ստացված բարեգործական բեռների ներմուծման ծրագրեր: